**ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ**
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ

# ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՔԸ

Հոդվածում քննության է առնվում հարկադիր կատարման միջոցների հիմքերի էության բացահայտման հետ կապված տեսական և գործնական մեկնաբանությունները: Մասնավորապես, քննարկման առարկա է դարձվել կատարողական թերթի, կատարողական մակագրության թերթի, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների էությունը: Բացահայտվել է դրանց տեղը և նշանակությունը իրավական համակարգի մեջ:

***Հիմնաբառեր***- *Դատական ակտերի հարկադիր կատարում, կատարողական վարույթ, կատարողական թերթ, կատարողական մակագրության թերթ, հանրային դրամական պահանջ, հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմք:*

Հարկադիր կատարման հիմքերի բովանդակությունը սահմանող և կատարողական վարույթը սկսելու համար ներկայացվող փաստաթղթերի ամբողջությունն ընդունված է անվանել կատարողական փաստաթղթեր[1]:

Կատարողական փաստաթուղթը կարող է ունենալ ինքնուրույն նշանակություն և տարանջատված լինի կատարման հիմքը սահմանող փաստաթղթերից: Միաժամանակ կատարման հիմքը սահմանող փաստաթուղթը կարող է համարվել նաև կատարողական փաստաթուղթ[2]:

Մեկ այլ դեպքում, սահմանվում է, որ կատարողական փաստաթղթերը՝ դրանք օրենքով սահմանված փաստաթղթերն են, որոնք ենթակա են հարկադիր կատարման դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով, երբ պարտապանը հրաժարվում է իր կամքով իրականացնել կատարողական փաստաթղթով ամրագրված իր պարտավորությունը[3]: Ընդ որում, պարտապանի կատարողական փաստաթուղթը կատարելուց հրաժարվելը պարտադիր պայման չէ, որպեսզի փաստաթուղթը համարվի կատարողական, քանի որ կատարողական փաստաթղթերով հարկադիր կատարման են ենթակա նաև պարտապանի գույքի վրա արգելանք դնելու գործողությունները ևս[4]:

Ուսումնասիրելով կատարողական փաստաթղթերի վերաբերյալ գրականության մեջ առկա կարծիքները, ՀՀ օրենսդրությունը՝ կարող ենք եզրահանգել, որ կատարողական փաստաթուղթը տեսական և ոչ թե օրենսդրական եզրույթ է: Այդ իսկ պատճառով էլ կատարողական փաստաթղթերը կբացահայտենք այն ծավալով, որ ծավալով այն ընկալվում է ՀՀ օրենսդրությամբ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի[5] 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքերն են.

- «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթը,
- կատարողական մակագրության թերթը,
- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի[6] 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը:

*Կատարողական թերթ*: Կատարողական թերթն իրենից ներկայացնում է դատարանի կողմից տրված փաստաթուղթ՝ կատարողական մարմիններին իրականացնելու պարտատիրոջ՝ դատական ակտով հավաստվող իրավունքները: Ընդ որում, կատարողական թերթը միջոց է, որը հնարավորություն է ընձեռում պարտատիրոջ համար հարկադիր կարգով իրացնել իր՝ դատական ակտով հավաստվող իրավունքները՝ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների միջոցով[7]:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ կատարողական թերթը տրվում է՝

1) դատարանի վճիռների, դատավճիռների, որոշումների և դատարանի արձակած վճարման կարգադրությունների հիման վրա.

2) արբիտրաժային տրիբունալների վճիռների հիման վրա.

3) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա դատարանների և արբիտրաժային տրիբունալների վճիռների և որոշումների հիման վրա.

4) Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ (մասնակցությամբ) գործող միջազգային դատարանի (արբիտրաժի) դատական

www.journal.law.institute.am

վճիռների կամ որոշումների հիման վրա:

5) Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումների հիման վրա:

Նշված ակտերի հիման վրա տրամադրվում է միատեսակ կատարողական թերթ՝ անկախ նրանից, թե այդ կատարողական թերթով ինչպիսի գործողություններ են իրականացվելու: Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով սահմանվում է, որ կատարողական թերթում պետք է նշվեն՝

1) կատարողական թերթ տված դատարանի անվանումը.

2) գործը, որի հիման վրա տրվել է կատարողական թերթը և դրա համարը.

3) կատարման ենթակա դատական ակտի կայացման տարին, ամիսը և ամսաթիվը.

4) կողմերի (պարտապանի և պահանջատիրոջ) անունը, ազգանունը, հայրանունը, իրավաբանական անձի անվանումը, նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները, քաղաքացու անձնագրային տվյալները, սոցիալական քարտի համարը՝ դրա առկայության դեպքում, իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Պարտապանի անձնագրային տվյալները, ինչպես նաև պարտապան-իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական գրանցման վկայականի համարը կարող են չնշվել, եթե գործի քննության ընթացքում դատարանը չի կարողացել ստանալ այդ տվյալները.

5) դատական ակտի եզրափակիչ մասը.

6) դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու տարին, ամիսը և ամսաթիվը.

7) կատարողական թերթ տալու տարին, ամիսը, ամսաթիվը և այն կատարման ներկայացնելու ժամկետը:

Ի հակադրություն սրա, օրինակ՝ Մեծ Բրիտանիայի քաղաքացիական դատավարության կանոններով սահմանվում է, որ կախված կատարման ենթակա գործողության տեսակից՝ կարող են տրամադրվել տարատեսակ կատարողական թերթեր[8]:

Տվյալ պարագայում, երբ կատարողական թերթի համար սահմանվում է միատեսակ ձև՝ անկախ կատարման ենթակա գործողությունների բովանդակությունից, անհասկանալի է դրա նշանակությունը: Կարծում ենք նման իրավիճակներում կարելի է կատարողական վարույթը հարուցել անկախ կատարողական թերթի առկայությունից: Եթե կատարողական թերթի հիմք հանդիսացող փաստաթղթում առկա են այն բոլոր նվազագույն պահանջները, որոնք նշվում են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով կատարողական թերթի բովանդակության համար, ապա անիմաստ է լրացուցիչ ծանրաբեռնել կատարողական վարույթին նախորդող գործընթացները: Օրինակ՝ Ֆրանսիական օրենսդրությունն այս կապակցությամբ սահմանում է, որ կատարողական փաստաթղթի առկայությունը պարտադիր չէ այնպիսի կատարողական գործողություններ իրականացնելիս, որոնք իրենց բնույթով ապահովող են. դրանց առկայությունը պարտադիր է դառնում միայն պարտապանի գույքի նկատմամբ բռնագանձում տարածելիս[9]:

Այդ իսկ պատճառով առաջարկում ենք «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում և դրան թղթակցող այլ հոդվածներում ևս կատարողական թերթը որպես հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմք սահմանել բացառապես այն դեպքերում, երբ կատարման ենթակա գործողությունների էությունը ոչ բավարար չափով է բացահայտված համապատասխան մարմինների կողմից ընդունված վճիռներով կամ որոշումներով, իսկ համապատասխան դատավարական օրենքներով կայացվելիք ակտերի պարտադիր պայման սահմանել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածում նշված պայմանները: Արդյունքում, անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետությունը ժամանակի և այլ միջոցների խնայողության տեսանկյունից կբարձրանա:

Մեր կարծիքով, կատարողական թերթի գործառույթները պետք է կայանան հետևյալ երկու ուղղություններով:

*Առաջին*: Կատարողական թերթով պետք է հավաստվեն պարտատիրոջ իրավունքները և պարտապանի պարտականությունները, և այն փոխանցելի գույքի պահանջի գծով որոշ դեպքերում կատարի նաև արժեթղթերի ֆունկցիա: Այլ կերպ՝ կատարողական թերթը, որը տրված է փոխանցելի գույքի համար, պետք է հնարավորություն ընձեռի պարտատիրոջը այն քաղաքացիական շրջանառության մեջ մտցնելու, դարձնելու առուծախի, գրավի և այլ պայմանագրերի առարկա:

Արդյունքում, դատական ակտերի հարկադիր կատարման մարմինները կատարողական թերթի հիման վրա կատարողական վարույթ կկարողանան հարուցել նաև այն դեպքում, երբ պարտատերը նյութական օրենսդրությամբ սահմանված կանոնների շրջանակում, կատարողական թերթի վրա համապատասխան փոխանցագիր կատարած կլինի այլ անձի անունով (պահանջի զիջում), իսկ կատարողական թերթը դատական ակտերի հարկադիր կատարման մարմին ներկայացնելու իրավասություն կստանա նաև նոր պարտատերը:

Կարծում ենք, որ նմանատիպ ինստիտուտի ներմուծումն անհրաժեշտություն է թեկուզև այն պատճառով, որ, այսօր Հայաստանում լայն թափ է ստացել պարտքերի հավաքագրման ծառայությունների մատուցումը: Նմանատիպ ծառայությունների զարգացման համար պետք է հնարավորություն ընձեռել այդ ընկերություններին զարգանալ և պարտքերի հավաքագրման ծառայություններին կից հնարավորություն ընձեռել գնել տարատեսակ կազմակերպությունների պահանջների պորտֆելը: Արդյունքում՝ օրինակ՝ վարկային կազմակերպությունները զերծ կմնան պարտքերի հավաքագրման գործընթացից և իրենց ներուժը կուղղեն բուն վարկային գործառույթների իրականացմանը, իսկ պարտքեր հավաքագրողները կմասնագիտանան պարտքերի հավաքագրման ուղղությամբ:

*Երկրորդ.* Կատարողական թերթով պետք է հարկադիր կատարման ենթարկվեն այն բոլոր վճիռները և որոշումները, որոնց հարկադիր կատարումն անհնար է բացառապես վճռի կամ որոշման ներկայացման միջոցով: Այդպիսի անհնարինությունը կարող է առաջանալ օրինակ հատկապես բարդ գործերով, երբ մեկ դատական ակտով մի քանի հայցվոր և/կամ մի քանի պատասխանողներ կան և կատարողական մարմնի համար կարող են դժվարություններ առաջանալ յուրաքանչյուր պարտավորության գծով պարտատիրոջ իրավունքները և պարտապանի պարտականությունները որոշելիս:

*Կատարողական մակագրության թերթ.* Կատարողական մակագրությունը համեմատաբար նոր ինստիտուտ է ՀՀ օրենսդրության մեջ, որը բացի «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքից, կարգավորվում է նաև «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով[10]: Այս ինստիտուտը կիրառվում է նաև օտարերկրյա օրենսդրության մեջ[11]:

«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 18.1-րդ գլխով սահմանվում է, որ պարտապանից դրամական գումարներ բռնագանձելու կամ գույք (իր) կամ փաստաթուղթ հանձնելու կամ սեփականության իրավունքը փոխանցելու՝ պարտատիրոջ պահանջը կատարելու համար նոտարն իր վավերացրած գործարքի վերաբերյալ կատարում է կատարողական մակագրություն: Կատարողական մակագրությունը կատարվում է, եթե կողմերի միջև կնքվել է նոտարական կարգով վավերացված համաձայնագիր, որով կողմերը համաձայնվում են տվյալ նոտարի վավերացրած գործարքից բխող գումար վճարելու կամ գույք (փաստաթուղթ) հանձնելու կամ սեփականության իրավունքը փոխանցելու պարտավորությունը չկատարելու դեպքում նոտարի կողմից կատարողական մակագրություն կատարվելու վերաբերյալ:

Կատարողական մակագրությունը կատարվում է, եթե կողմերի համաձայնությամբ դրամական գումարներ կամ գույք (իր) կամ փաստաթուղթ հանձնելու կամ սեփականության իրավունքը փոխանցելու՝ պարտապանի պարտավորությունը կատարվելու է նոտարական ակտեր կայացնելու կամ նոտարական գործողություններ կատարելու միջոցով:

Ընդ որում, կատարողական մակագրությունը կատարվում է պարտատիրոջ դիմումի հիման վրա՝ կատարողական մակագրության թերթ տրամադրելով:

Կատարողական մակագրության թերթ տալու պայմանների մասով «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ կատարողական մակագրության թերթը տրվում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, եթե՝

1) ներկայացվում են նոտարական կարգով վավերացված փաստաթղթեր, որոնք հաստատում են պարտատիրոջ հանդեպ պարտապանի անվիճելի պարտավորությունը, և բացակայում է պարտատիրոջ հանդիպական պարտավորությունը.

2) առկա են «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 82.1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված հիմքերը.

3) պարտատերը ներկայացնում է պարտքը բռնագանձելու կամ չկատարված պարտականությունը կատարելու համար նոտարին կատարողական մակագրություն տալու համար դիմելու մասին պարտապանին պատշաճ կարգով ծանուցելու վերաբերյալ ապացույց:

Կարծում ենք, որ նմանատիպ իստիտուտի ներմուծումը բացառապես դրական կարող է ազդել քաղաքացիական շրջանառության վրա: Սակայն, մեր կարծիքով, պետք չէր սահմանափակվել միայն նոտարական կատարողական մակագրության թերթերով, այլ նաև հնարավորություն պետք է սահմանվեր քաղաքացիական շրջանառության մասնակիցներին նոտարական վավերացում չպարունակող, սակայն իրենց բնույթով տիպային հանդիսացող գործարքներից բխող պարտավորությունների հարկադիր կատարումը ևս իրականացնել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով: Այսպես՝ կառավարության կամ այլ իրավասու մարմինների կողմից հաստատված օրինակելի պայմանագրերից բխող պարտավորությունների հարկադիր կատարումը ևս ենթակա է կատարման դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից, եթե այդ կապակցությամբ պարտավորության կողմերը վերապահում են կատարել դրա հարկադիր կատարման

կապակցությամբ և դրա մասին տեղեկացրել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը: Կարծում ենք, որ այս գործիքը ևս կարող է խթան հանդիսանալ քաղաքացիական շրջանառությունը աշխուժացնելու համար, քանի որ սրա միջոցով գործարքի կողմերը երաշխավորում են իրենց իրավունքների հնարավորինս արագ իրացումը:

*«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը որպես հարկադիր կատարման հիմք:* Հարկադիր կատարման նշված հիմքն առավելապես վերաբերում է հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարմանը, ինչպիսի պրակտիկա առկա է նաև օտարերկրյա օրենսդրության մեջ: Այս առումով կարծում ենք, որ օրենսդիրը չպետք է սահմանափկվեր միայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 13-րդ գլխով, այլև պետք է սահմանվեր, որ օրեքնով սահմանված այլ դեպքերը ևս կարող են հանդիսանալ հարկադիր կատարման հիմք: Այսպես՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի տրամաբանության շրջանակներում հարկադիր կատարման ծառայության միջոցով կարող են կատարվել նաև ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով[12] նախատեսված տույժերից վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավումը: Հատկանշկան է, որ նմանատիպ փորձ առկա է օտարերկրյա օրենսդրության մեջ ևս[13]:

Այսպիսով՝ կատարված ուսումնասիրության արդյունքում կարող ենք եզրահանգել, որ

1. անհրաժեշտ է կատարողական թերթի առկայությունը ոչ բոլոր դեպքերում դիտարկել որպես կատարողական վարույթ հարուցելու հիմք: Այդպիսի հիմք կարող է հանդիսանալ նաև հարկադիր կատարման իրավունքը սահմանող ակտը, եթե այն իր մեջ պարունակում է օրենքով կատարողական թերթի էությանը ներկայացվող պահանջները:

2. Կատարողական թերթին որոշ դեպքերում պետք է օրենքով ընձեռել գործառույթներ, որոնք հնարավոր կդարձնեն դրանց շրջանառությունը քաղաքացիական հարաբերությունների մեջ:

3. Բացի նոտարի կողմից վավերացված գործարքներից բխող պարտականություններից հարկադիր կատարման պետք է ենթարկել նաև կառավարության կամ այլ իրավասու մարմինների կողմից հաստատված օրինակելի պայմանագրերից բխող պարտականությունները, եթե գործարքի կողմերը նախապես այդ մասին համաձայնություն են կայացրել:

4. Բացի հանրային դրամական պահանջների հարկադիր կատարման հնարավորությունից այդպիսի հնարավորություն պետք է նախատեսել ցանկացած այլ դեպքում, երբ առանձին օրենքով այդ կապակցությամբ դրույթ կսահմանվի:

---

[1] Տե՛ս, Валеев Д.Х. Исполнительные документы как основания принудительного исполнения // Арбитражный и гражданский процесс. 2000. N 2, С. 53-56. Бабиев В.Г. Исполнительный документ. Есть ли вопросы”// Бюллетень Министерства юстиции РФ. 2002. N4, С. 53-57. Пиворез О.В. Статья 7 ФЗ «Об исполнительном производств» в контексте конституционных установлений и приоритетов // Правовая политика и правовая жизнь. 2002. N 3, С. 194-196.

[2] Տե՛ս, Валеев Д.Х. Система процессуальных гарантий прав граждан и организаций в исполнительном производстве. Диссертация на соискание ученой степени доктора юридических наук, Казань, 2009, С. 43-44.

[3] Տե՛ս, Настольная книга судебного пристава-исполнителя: Справочно-методическое пособие / Отв. ред. Яркое В.В. - М.: Издательство БЕК, 2000, С.153.

[4] Տե՛ս, Кузнецов Е.Н. Исполнительное производство Франции. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Екатеринург, 2004, С. 105.

[5] Տե՛ս, ՀՀՊՏ 1998.06.15/12(45):

[6] Տե՛ս, ՀՀՊՏ 2004.03.31/18(317):

[7] Տե՛ս, Гладышев С.И. Исполнительное производство в английском и российском праве. Диссертация на сосикание ученой степени кандидата юридических наук. М., 2001, С. 28.

[8] Տե՛ս, https://www.justice.gov.uk/courts/procedure-rules/civil/pdf/schedule1/rscorder46.pdf ինտերնետային կայքէջը 28.03.2017թ. դրությամբ:

www.journal.lawinstitute.am

[9] Տե՛ս, Кузнецов Е.Н. Исполнительное производство Франции. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Екатеринбург. 2004, С. 106.
[10] Տե՛ս, ՀՀՊՏ 2002.01.10/2(177) հոդ.2:
[11] Տե՛ս, Кузнецов Е.Н. Исполнительное производство Франции. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Екатеринбург. 2004, С. 105, Научно-практический комментарий к Федеральному закону "Об исполнительном производстве. Постатейный, 2-е издание, исправленное, переработанное и дополненное. Под ред. В.М. Шерстюка, М.К. Юкова. Городец, 2004, էջ 26 և այլ աշխատություններ:
[12] Տե՛ս, ՀՍՍՀԴՍ 1985/23:
[13] Տե՛ս, Валеев Д.Х. Система процессуальных гарантий прав граждан и орагизаций в исполнительном производстве. Диссертация на соискание ученой степени доктора юридических наук, Казань, 2009, С. 175.

**Роберт Казарян**
Соискатель Государственной академии
управления Республики Армения

РЕЗЮМЕ

*Основание применения мер принудительного исполнения*

В статье представлены теоретические и практические толкования, связанные с раскрытием сути оснований мер принудительного исполнения. В частности, предметом рассмотрения стала суть исполнительного листа, листа исполнительного распоряжения, а также требований части 4 статьи 88 Закона Республики Армения "Об основах администрирования и административном производстве". Раскрыты также их место и значение в правовой системе.

***Ключевые слова:*** *принудительное исполнение судебных актов, исполнительное производство, исполнительный лист, лист исполнительного распоряжения, публичное денежное требование, основание применения мер принудительного исполнения.*

**Robert Ghazaryan**
Applicant of the Public Administration
Academy of the Republic of Armenia

SUMMARY

*Basis for applying compulsory enforcement measures*

The article examines the theoretical and practical comments to the disclosure of the nature of compulsory enforcement measures' bases. In particular, the subject of the discussion is the essence of the writ of execution, performance note paper with the "Principles of Administration and Administrative Proceedings of the Republic of Armenia" Law Article 88 (4) requirements. Their place and importance in the legal system is revealed.

***Keywords:*** *compulsory enforcement of judicial acts, enforcement proceedings, writ of execution, enforcement note sheet of the monetary claim, basis for applying compulsory enforcement measures.*